

56. ԳՅԵԼ ՈՒ ԱՂՎԵՍ ԱԽՊԵՐ

Մեկ մարթ կէղի, նեճըրվան կէղի: Կէրթա մեշի մեչ նեճիր կէ-նա, հեվարին կը գա տուն:

Օրըմ կիյա մեշի մեչ նեճիր, թուչախ կը թալա, փըշու՛մ ժա-ժիկ կը թալա թուչախ վե, կը տառնա, գա տուն:

Հիրիկուն աղվըսներ կը գան: Մեկըն կընգյի թուչախ:

Էն մեկ աղվես կը տառնա, կը գա, կասա. - Քյե կասաֆաթ մ'է՛նի, ես քյե կը պըռծուցեմ:

Կասա. - Ի՞նչըխ ձի տը պըռծուցես:

Կասա. - Տու նըստի՛ դա, ես կիքամ, կը պառկիմ դա, ես քիչըմ եռու կը պառկիմ, խըլըսուն տեր կը գա, կը գա, խընդալուց քյե կարծըրա, գյիտնա, թը տու մեռիր ես: Քյե կարծըրա, կը տառ-նա գա խըն ձի, տու էտա դեխ փախի՛, ես՝ էսա տեղ:

Կը պառկին խընդրաց: Տեր խըլըսուն խընդալոց կը գա, կասա. «Աստըված ձի տվեր ա, էրկու խատ գի ինգեր ա թուչախ»: Կը վազա, էն մեկ թուչխից կը խանա, կը խի, մեկ էն դեխ պառկեր ա, կը թալա, կը վազա դեխ էն էկել:

Աղվես կասա. - Դե՛, քյե պըռծո՛ւր:

Էրկուսն էլ խընդալով կը փախնին:

Խողածին լարեց հետեվ, նըստավ, էլաց:

Մարթըմ էկավ, ասաց. - Ընչո՞ւ կը լաս:

Ասաց. - Հալ ու քյեֆաթ ամլա էղավ: Էրկու աղվես ինգյեր են իմ թուչախ, ես էկա, օր թե պըռներ, մեկն ծարծըրեցի, գացի խըդ էն մեկէլ, էրկուսն էլ էլան, փախան, գացին, էլան քարի գյըլոխ, ասին՝ խե՞ս՝ մենքյ ինչըխ մե ազատեցինքյ:

Էտ մարթ ասաց. - Տէ՛ւ ինչ ախմախ մարթ ես, մարթու ծեռ աղվես ընգի, մարթ թորկա ամլա՛ փախնի, էն մեկ թը պըռներ, նոր էրթեր, էն մեկ ա՛ռծըրեր:

Ասաց. - Ես խընդա՛լուց թըռուցի վըր ծի:

Մարթ էթող, գյընա՛ց: Նեճըրվան գյընա՛ց ուր տուն դէ՛ռիս:

Ուր կընգա՛ն քըսա էրաց, ասաց. - Կի՛ն, հէսօր Աստըված մի կըսմա՛թ էտու, ես չըգյիցա ուտեր:

Ասաց. - Ի՞նչ ա էղե:

Ասաց. - Ի՞նչ տ'էղի, վալա՛, գա՛ցի, մեկ աղվես ինգեր էր թուչա՛խ, ես գա՛ցի, տ'ա՛ռծըրեր: Օրնեցի էն դեխ, մեկէլ տեսա, եսն էլ թա՛լեցի, համա թողի գյետին, վա՛զեցի, գա՛ցի, էրկուսն էլ էլա՛ն, փախան:

Կին ասաց. - Խող քէ՛ւ գյըլխուն էղնի, քյե պես մարթ, ամլա՛ քէ՛ւ ճըժեր տիրես:

Տա՛շտի մեչ գյել կիյեր, աղվես մ' էկավ ասաց. - Գյե՛լ ախպեր, տ'էյաս դէ՞ր:

Ասաց. - Տ'էրթամ թա՛գա՛վորի խըզինի գէ՛ղուբեն:

Ասաց. - Գյե՛լ ախպեր, տէ՛ւ ծի չէնի՞ս քյե ինգյեր:

Ասաց. - Կէնիմ, քյելա՛ իյանքյ:

Ասաց. - Իյանքյ, քյե կը մընուցեմ փա՛նջա՛ռեն, տէ՛ւ պըստիկ ես, առիս խըզինի տոպրակ, գա՛ս, ես կը մընամ տէ՛ւս, տէ՛ւ կէլիս տէ՛ւս, նոր խընդրա՛ց կը փախնինքյ:

Գա՛ցին: Խասան թա՛գա՛վորի դա՛ռգա՛խ: Աղվես ախպեր մընտավ ներս, գյել կա՛յնավ տէ՛ւռ: Շըներ օր էկան, գյել փախավ, զաղվես պըռնեցին:

Գյել փախավ զա՛տնացավ, ասաց. - Աղվե՛ս ախպեր, կը խե՞ս՝ ինչ ես քյե տըվի պըռնել:

Գյել փախավ, գյընա՛ց, գյընա՛ց չուր մեշի մեչ կա՛յնավ:

Աղվես մ' էկավ, ասաց. - Հէ՞ւստ կը գա՛ս, գյե՛լ ախպեր:

Գյել ախպեր ասաց. - Ես գա՛ցեր էր խըզինի գէ՛ղուբեն:

Ասաց. - Տէ՛ւ մենա՞կ էր:

Ասաց. - Չէ՛, եսն էր, իմ ինգյեր՝ աղվես ախպեր:

Ասաց. - Հէ՞ւր ի աղվես ախպեր:

Ասաց. - Էն մընաց էն տեղ:

Չասաց՝ պըռնած, խեղտած են:

Աղվեսն ասաց. - Քյելի՛: Ես, տէ՛ւ էլ իյանքյ:

Աղվես ու գյել կէլին, կիյան:

Կիյան, կը խասին կես ճամխին, աղվես կասա. - Դենավեր կիյան, դենավեր չըն իյա:

Գյել կասա. - Դէ՞ր տ'իյանքյ:

Աղվես կասա. - Ես քյե շանքյ կը տամ, քյե կը տանեմ թանգ-վորի խըզինեն:

Կէրթան, շատ կէրթան, քիչ կէրթան, կէրթան թուչխի մոտ: Աղվես չըխո կիմնա, թուչխի պէուլոր կը ֆըռա, չիկա հինե: Գյել կիյա, կընգի հինե:

Աղվես կը փախի, էլնի սարի գյըլոխ, կասա. - Կը խե՞ս՝ ես քյե ի՞նչըխ էցկեցի թուչախ, ես աղվես ախպերն եմ:

Գյել կը բոռա, կասա. - Աղվե՛ս ախպեր, հե՞ր փախար, ձի թողիր ըստա:

Կասա. - Մը՛ վախենա, խըլըսուն էրկու շուն ու մարթըմ կը գան, քյե կը պըռծուցեն:

Խըլըսուն մարթ շըներով կը գա: Կը պըռնեն, կը տըփեն, քանի տըփին, գյել կը բէռա՝ աղվե՛ս ախպեր, էս ի՞նչ էր՝ էրիր իմ գյըլոխ:

Աղվես կը բէռա, կասա. - Գյե՛լ ախպեր, օխչըրի ուտել անո՞ւշ էր, իմ ախպէր տարար, էցկեցիր բալա, անո՞ւշ էր: Ես ամլա մարթ եմ:

Զարկին, զարկին, գյել խատուցին: